ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի՝ Ֆրանսիա (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Գրիգոր Մինասյան, ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիա (Ստրասբուրգ), 2023թ. հունիսի 11-ից 14-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհուրդ:

Գործուղման նպատակը՝ հանդիպումներ ունենալ Ֆրանսիայի Հանրապետությունում (Ստրասբուրգ) Եվրոպայի խորհրդի բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ:

Քննարկված թեմաները՝ Մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության, օրենքի գերակայության ոլորտներում կանանց նկատմամբ բռնության և իրավահավասարության ամրապնդման, դատական և իրավական բարեփոխումների, քրեական արդարադատության բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի և դրա կանխարգելման ուղղություններով հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- Նախարար Մինասյանը Ստրասբուրգ կատարած պաշտոնական այցի շրջանակներում հանդիպում է ունեցել ՄԻԵԴ նախագահի հետ:

Եվրոպայի խորհրդի բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ քննարկվել է ՀՀ-ԵԽ համագործակցության շրջանակներում Արդարադատության նախարարության բարեփոխումային օրակարգը, մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության, օրենքի գերակայության ոլորտներում գրանցած համատեղ ձեռքբերումները և համագործակցության հեռանկարները:

Քննարկվել են նաև դատաիրավական համակարգում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտման հիմքով կարգապահական վարույթներ հարուցելու և կատարողական վարույթների վերաբերյալ դատարանի որոշումները:

Նախարարը ներկայացրել է նախարարության կողմից մշակվող նոր «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծը, որով ՄԻԵԴ կողմից վերհանված գրեթե բոլոր խնդիրներն իրենց լուծումն են գտել:

Քննարկել են նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ՄԻԵԴ վճիռների կատարումը վերահսկելու առկա մեխանիզմները:

- Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը Ստրասբուրգ կատարած այցի շրջանակում հանդիպել է «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)» նախագահ Կլեր Բազի Մալորիի և Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Սիմոնա Գրանատա-Մենգինիի հետ:
- Վերջիններիս հետ քննարկվել են Վենետիկի հանձնաժողովի աշխատանքը և նրա ներդրումը Հայաստանում ընթացող դատաիրավական և սահմանադրական բարեփոխումներին: Նախարարը հատուկ անդրադարձ է կատարել Հանձնաժողովի գործուն աջակցությամբ վերջին տարիներին Հայաստանի համար անկյունաքարային հանդիսացող իրավակիրառ հարցերի լուծումներին՝ կապված Սահմանադրական դատարանի նոր մոդելի իրագործման, դատավորների անհամատեղելիության մեխանիզմների և կարգապահական վարույթների, ինչպես նաև այդ վարույթների արդյունքում ընդունված որոշումների բողոքարկման մեխանիզմների կարգավորման հետ:

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը Ստրասբուրգում հանդիպել է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ:

Քննարկվել են մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության ու օրենքի գերակայության ամրապնդման հետ կապված մի շարք հարցեր:

Գրիգոր Մինասյանն ընդգծել է, որ ՀՀ-ԵԽ 2019-2022թթ. գործողությունների ծրագիրն առանցքային գործիք է եղել Կառավարության բարեփոխումների լայնածավալ օրակարգում և ըստ, էության, անդրադարձել է արդարադատության ոլորտում ընթացող բարեփոխումների օրակարգի ողջ սպեկտրին: Միաժամանակ նախարարը կարևորել է ՀՀ-ԵԽ նոր՝ 2023-2026թթ. գործողությունների ծրագրով համատեղ շարունակական աշխատանքների իրականացումն այնպիսի կարևորագույն ոլորտներում, ինչպիսիք են դատաիրավական համակարգի հետագա բարեփոխումները, ՄԻԵԴ վճիռների կատարումը, քրեակատարողական և պրոբացիոն համակարգերի բարեփոխումները, մարդու իրավունքների պաշտպանության և գենդերային հավասարության ապահովման իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները:

Քննարկվել է Վենետիկի հանձնաժողովի հետ համագործակցությունը դատական և իրավական բարեփոխումների օրակարգի շրջանակներում: Հատուկ անդրադարձ է կատարվել

Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) հետ կատարած լայնածավալ աշխատանքին:

Տիկին Պեյչինովիչը բարձր է գնահատել Հայաստանի վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցի հանձնարարականների լույսի ներքո կոռուպցիայի կանխարգելման ոլորտում Հայաստանի ձեռքբերումները, ինչի արդյունքում Հայաստանը դուրս է եկել ԳՐԵԿՈ-ի գնահատման անհամապատասխանության գործընթացից:

Քննարկվել են նաև Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները և ԵՄ-ի միջազգային իրավական գործիքների շրջանակներում համագործակցությունը:

Նախանշվել են առաջիկայում կայանալիք բարձրաստիճան հանդիպումներն ու միջոցառումները, ինչպես նաև ԵՄ-Հայաստան համագործակցության հեռանկարները:
Կողմերը պայմանավորվածություններ են ձեռք բերել հետագա համագործակցության ուղղություններով:

Գրիգոր Մինասյան

X _____

16.06.2023թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ արդարադատության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը համարը ՀՀ վարչապետի 05.06.2023թ. թիվ 613-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Գրիգոր Մինասյան, ՀՀ արդարադատության նախարար
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը ք.Ստրասբուրգ, Ֆրանսիայի Հանրապետություն
5. Գործուղման ժամկետները 2023թ. հունիսի 11-14-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
☒ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Գրիգոր Մինասյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	258,612	258,6
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	133 եվրո	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	55,344	55,3
	Օրերի քանակը	3	3
	Ընդամենը (դրամ)	166,033 (3*133€=399€*414,12դրամ= 165,234 դրամ, որի 60%=99,140 դրամ (3*133€=399€*419,13դրամ =167,232 դրամ, որի 40%=66,893դրամ)	166,0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	113 եվրո	
	Վճարը 1 օրվա համար	46,795.56	46,8

	(դրամ)		
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	187,182. 24	187,2
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*Սպասարկում ՊՊ սրահում*)	10,000	10,0
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		621,827.24	621,8

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

6/16/2023

X

ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ

Signed by: AREYAN TIGRAN 3014720305

ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ